ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Սոնա Միրզոյանի՝ 2024թ. ապրիլի 22-ից 26-ը ներառյալ Ղազախստանի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Սոնա Միրզոյան, ՀՀ ֆինանսների ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ք. Ալմաթի, Ղազախստանի Հանրապետություն, 2024 թվականի ապրիլի 22-ից 26-ը

3. Հրավիրող կողմը՝

Ասիական զարգացման բանկ (ԱԶԲ)

4. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն «Հանրային ֆինանսների կառավարման համակարգերում կլիմայական գործողությունների ինտեգրում» թեմայով աշխատաժողովին

5. Քննարկված թեմաները՝

Աշխատաժողովը նվիրված էր զարգացող անդամ պետությունները ներկայացուցիչների կարողությունների բարձրացմանը՝ կլիմայի փոփոխության ազգային նպատակներին հասնելու համար իրականացվող գործընթացների համատեքստում: Կլիմայի փոփոխությանն առնչվող նկատառումները հանրային ֆինանսների կառավարման գործընթացներում ներառելով՝ զարգացող անդամ պետությունները կարող են ապահովել ռեսուրսների ավելի արդյունավետ բաշխում, բարձրացնել պետական ներդրումների կայունությունը և առաջ մղել երկրի կլիմայական օրակարգի իրականացումը: Աշխատաժողովի նպատակն էր ներկայացնել պատկերացումներ և ռազմավարություններ՝ հանրային ֆինանսների կառավարման մեխանիզմները որպես շրջակա միջավայրի պահպանության և կլիմայի դիմակայության կատալիզատոր օգտագործելու համար:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Աշխատաժողովի առաջին օրը ներկայացվեց կլիմայի փոփոխության հիմքում ընկած գիտական ասպեկտների ակնարկը, ինչպես նաև Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնտեսական համագործակցության («CAREC») երկրներին հատուկ՝

սպասվող գլոբալ և տարածաշրջանային փոփոխությունների նկարագիրը: Մանրամասն ներկայացվեց Կլիմայի փոփոխության հարցերով միջկառավարական հանձնաժողովի («IPCC») կողմից իրականացված գնահատումների նշանակությունը և դրանց ազդեցությունը կլիմայի կանխատեսումների և սոցիալ-տնտեսական ոլորտների վրա: Տրամադրվեց տեղեկատվություն կլիմայի փոփոխության այնպիսի նախաձեռնությունների մասին, ինչպիսիք են Փարիզի համաձայնագիրը, ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիան («UNFCCC») և այլ նմանատիպ մեխանիզմներ:

Հաջորդիվ ներկայացվեց տեսաշնորհանդես Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնտեսական համագործակցության երկրներում կլիմայի փոփոխության ազդեցության և այդ համատեքստում անհապաղ տարածաշրջանային գործողությունների անհրաժեշտության վերաբերյալ: Տրամադրվեց տեղեկատվություն կլիմայի փոփոխության համատեքստում առկա ինստիտուցիոնալ մեխանիզմների և գործողությունների ծրագրերի վերաբերյալ:

Առաջին օրը կատարվեց նաև երկու խմբային աշխատանք. մասնավորապես, յուրաքանչյուր խումբ պետք է վերհաներ կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության միջոցառումներ և ներկայացներ դրանց տարբերությունները, կիրառման հնարավոր մեխանիզմները և ազդեցությունը:

Երկրորդ աշխատանքի դեպքում մասնակիցները առաջին խմբային աշխատանքի շրջանակներում վերհանված միջոցաումների հիման վրա պետք է գնահատեին դրանց արձագանքման դեպքում հանրային ֆինանսների վերաբաշխման հնարավորությունները՝ ըստ միջոցառումների առաջնայնության:

Երկրորդ օրը քննարկվեցին կլիմայի փոփոխության տնտեսական հետևանքները: Ներկայացվեցին կլիմայի հետ կապված իրադարձությունների և դրանց տնտեսական ազդեցությունների տարբեր օրինակներ՝ երկրի առջև ծառացած մարտահրավերների մասին պատկերացում կազմելու համար: Քննարկվեցին դրանց գլոբալ, մասնավոր և համակցված ազդեցությունները տարբել ոլորտների վրա:

Այնուհետև քննարկվեց կլիմայի փոփոխության ազդեցությունը հանրային ֆինանսների կառավարման համատեքստում, մասնավորապես" կլիմայի փոփոխություններին արձագանքման արժեքը, դրանց՝ ֆիսկալ ռիսկերի վերածվելու և առարկայանալու հնարավորությունները և ֆինանսավորման հարցերը: Ներկայացվեց կլիմայի փոփոխությանն առնչվող միջոցառումների՝ հանրային ֆինանսների կառավարման շրջանակում ընդգրկելու անհրաժեշտությունը և այդ մասով որոշ երկրների հաջող փորձը:

Ներկայացված տեղեկատվության հիման վրա երկրորդ օրը ևս կատարվեց թիմային աշխատանք, մասնավորապես"սիմուլյացիոն իրավիճակի հիման վրա խմբերը պետք է փոխկապակցեին կլիմայական աղետի հետևանքները հանրային ֆինանսների կառավարման գործընթացներին և վերհանեին դրա հետևանքով առաջացող ֆիսկալ ռիսկերը և բացասական ազդեցությունները երկրի տնտեսության վրա:

Աշխատաժողովի երրորդ օրը ներակայացվեց համառոտ տեսաշնորհանդես մասնակից պետությունների կլիմայական իրավիճակի և այդ շրջանակներում ընթացող գործընթացների վերաբերյալ:

Այնուհետև բոլոր մասնակից պետությունները ներկայացրեցին նախապես պատրաստված տեսաշնորհանդեսներ՝ իրենց երկրներում ընթացող հանրային ֆինանսների կառավարմանն առնչվող կլիմայական բարեփոխումների վերաբերյալ:

Դրանից հետո մասնակիցները խմբեր կազմեցին՝ ըստ երկրների, և ներկայացրեցին իրենց երկրներում կլիմայի փոփոխությանն առնչվող առաջնային ռեֆորմները, կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը և այն միջազգային գործընկերների ցանկը, որոնց օժանդակությամբ իրականացվում են նմանատիպ բարեփոումները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպումների և քննարկումների ընթացքում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

Ստորագրությունը, ամսաթիվը՝

2 մայիսի, 2024թ.